

**Դատական Գործ N: ԵԿԴ/0073/01/09**

|  |  |                           |             |
|--|--|---------------------------|-------------|
| <b>Երբ է գործը ստացվել:</b>                              | 11-05-2009   |                           |             |
| <b>Քրեական գործի համարը:</b>                             | 0073/01/09   |                           |             |
| <b>Ինչ կարգով է գործը ստացվել:</b>                       | Առաջին անգամ   |                           |             |
| <b>Գործը որտեղից է ստացվել:</b>                          |  |                           |             |
| <b>Դատախազություն:</b>                                   | << Գլխավոր դատախազություն  |                           |             |
| <b>Նախաքննական գործի համարը:</b>                         | 58201009   |                           |             |
| <b>Մեղադրական եզրակացության համառոտ բովանդակություն:</b> | Մեղադրվում է այն բանի համար, որ բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ մաստեր քարդ միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող Արմենիա քարդ ՓԲԸ համակարգերի միջոցով գումարներ է հիշտակել, ապա դրանք օրինականացրել |                           |             |
| <b>Մեղադրյալ</b>   |  |                           |             |
| <b>Անձ</b>   |  |                           |             |
|  | Անուն  | Մարիամ                    |             |
|  | Ազգանուն   | Հարությունյան             |             |
|  | Հայրանուն  | Միքայելի                  |             |
|  | Հասցե  | Այգեստան 3-րդ փող. տուն 4 |             |
| <b>Հոդված_1</b>  |  |                           |             |
|  | Հոդված   | 177                       | Մաս 2 Կետ 2 |
| <b>Հոդված_1</b>  |  |                           |             |
|  | Հոդված   | 190                       | Մաս 1       |
| <b>Դատվածություն:</b>                                    |  |                           |             |
| <b>Պաշտպան</b>   |  |                           |             |
|  | Անուն  |                           |             |
|  | Ազգանուն   |                           |             |
|  | Հասցե  |                           |             |
| <b>Վիճակագրական տողի համարը:</b>                         | 6.3  |                           |             |
| <b>Իրեղեն ապացույց</b>                                   |  |                           |             |
| <b>Իրեղեն ապացույցի անվանումը:</b>                       |  |                           |             |
| <b>Իրեղեն ապացույցի պահպանման փաստացի տեղը:</b>          |  |                           |             |
| <b>Խախտման միջոց:</b>                                    | Կալանավորում   |                           |             |
| <b>Երբ:</b> 11-05-2009                                   |  |                           |             |
| <b>Նախագահող դատավոր</b>                                 |  |                           |             |
| <b>Դատարանի անվանում:</b>                                | Կենտրոն և Նորք-Մարաշ   |                           |             |
| <b>Դատավորի անուն:</b>                                   | Ժորա Սարգսի Վարդանյան  |                           |             |
| <b>Դատավոր</b>   |  |                           |             |
| <b>Դատարանի անվանում:</b>                                | Կենտրոն և Նորք-Մարաշ   |                           |             |
| <b>Դատավորի անուն:</b>                                   |  |                           |             |

|  |  |
|--|--|
| <b>Երբ:</b>                              | 12-05-2009   |
| <b>Որոշումը ուղարկվել է կողմերին:</b>    | 12-05-2009   |
| <b>Ուղարկվել է հուշաթերթիկ/որոշումը:</b> | 12-05-2009   |
| <b>Այլ նշումներ:</b>                     |  |
| <b>Երբ:</b>                              | 27-05-2009   |
| <b>Երբ:</b>                              | 02-06-2009   |
| <b>Երբ:</b>                              | 10-06-2009   |
| <b>Դատավարության կողմեր:</b>             | Պաշտպան  |
| <b>Դատավարության կողմեր</b>              |  |
| <b>Անուն</b>                             | Կարեն  |
| <b>Ազգանուն</b>                          | Ղազարյան   |
| <b>Հասցե</b>                             | Բաղրամյան 1 փակ.14շ.   |
| <b>Այլ նշումներ:</b>                     |  |
| <b>Ժամ:</b>                              | 16:00  |
| <b>Ամսաթիվ:</b>                          | 10-06-2009   |
| <b>Այլ նշումներ:</b>                     |  |
| <b>Ամսաթիվ:</b>                          | 10-06-2009   |
| <b>Հոդված</b>                            |  |
| <b>Հոդված</b>                            | 177 Մաս 2 Կետ 2  |
| <b>Հոդված</b>                            |  |
| <b>Հոդված</b>                            | 190 Մաս 1 Կետ 2  |
| <b>Այլ:</b>                              |  |
| <b>Հիմնական:</b>                         | Պատիժը պայմանականորեն չի նկարագրվել (<< քր. օր. 70 հոդ.)   |
| <b>Լրացուցիչ:</b>                        |  |
| <b>Այլ:</b>                              |  |
| <b>Դատական ակտի բովանդակությունը:</b>    | ԳործԵԿՂ0073/01/09թ.<br>ԴԱՏԱՎՃԻՌ<br>ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ<br>Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը հետևյալ կազմով .<br>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ժորա Վարդանյան<br>ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ Էմմա Ավետիսյանի<br>մասնակցությամբ<br>ՄԵՂԱԴՐՈՂ ՀՀ գլխավոր դատախազության դատախազ<br>Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ<br>ՊԱՇՏՊԱՆ՝ Ռ.ՂԱԶԱՐՅԱՆԻ |

դռնբաց դատական նիստում, արագացված դատաքննության կարգով, 2009թ. հունիսի 10-ին, քննեց քրեական գործն ըստ մեղադրանքի.

Մարիամ Միքայելի Հարությունյանի.

ծնված 16.08.1981թ., Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին երկու անչափահաս երեխա, աշխատում է որպես «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի տնօրեն, նախկինում չդատված, հաշվառված ք. Երևան, Հալաբյան 25 շենք, բն. 9, բնակվում է՝ ք. Երևան, Այգեստան 3-րդ փողոց տուն 4 :

Կալանքի տակ է 09.02.2009թ.-ից

Մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով:

Գործի դատավարական նախապատմությունը

Քրեական գործը հարուցվել է 02.02.2009թ. ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության քննչական վարչության կողմից:

Առաջադրված մեղադրանքի բովանդակությունը.

Ամբաստանյալ Մարիամ Հարությունյանը, հանդիսանալով «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի տնօրեն, Երևանի Ալեք Մանուկյան 7 բնակարան 66 հասցեում գործող «Ֆեյշն Թայմ» խանութում զբաղվելով կանացի ջինսե հագուստի և աքսեսուարների մանրածախ առևտրով, Արմեն Պողոսի Հովհաննիսյանի օժանդակությամբ. ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ «Master kard» միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող «Արմենիան քարդ» ՓԲԸ-ի համակարգերի միջոցով գումարներ է հափշտակել, ապա դրանք օրինականացրել:

Այսպես, ամբ. Մարիամ Հարությունյանը 2008թ. հոկտեմբերի 17-ին որպես վճարում է ընդունել «MBNA AMERICA BANK» ամերիկյան բանկի կողմից թողարկած 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով, որի արդյունքում գողացված 2.983.000 ՀՀ դրամը փոխանցել է «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի «Կասկադ բանկ» ՓԲԸ-ում սպասարկվող հաշվեհամարին:

Ամբ. Մարիամ Հարությունյանը գիտակցելով, որ վերը նշված խոշոր չափերի 2.983.000 ՀՀ դրամը /«MBNA AMERICA BANK» ամերիկյան բանկի կողմից ետ պահանջված գումարը/ ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում և նպատակ ունենալով խեղաթյուրել այդ գումարի հանցավոր ծագումը, այն կանխիկացրել է, որպես հասույթ մուտքագրել ընկերության դրամարկղ և հանցավոր ճանապարհով ստացված գումարը ցույց տալով ծախս, դրանից կատարել է փոխանցումներ ընկերության հաշվեհամարից:

Նշված արարքները կատարելու համար Մարիամ Հարությունյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով:

Քրեական գործը հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 06.05.2009թ.:

Մինչ դատաքննությունն սկսելն ամբաստանյալ Մարիամ Հարությունյանը միջնորդեց գործը քննել արագացված դատաքննության կարգով և հայտարարեց, որ միջնորդությունը ներկայացրել է կամավոր, խորհրդակցել է պաշտպանի հետ, գիտակցում է արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետևանքները, առաջադրված մեղադրանքներն իրեն պարզ է, համաձայն է մեղադրանքիների հետ և առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր է ճանաչում:

Ղատարանը համոզվելով, որ առկա են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1 և 375.2 հոդվածներով նախատեսված հիմքերը և պայմանները, որոշում կայացրեց գործը քննել արագացված դատաքննության կարգով:

Ղատարանը հիմք ընդունելով մեղադրանքի հիմքում դրված ապացույցները՝ վկաներ Տիգրան Շահենի Հովհաննիսյանի, Ռոման Ռուբիկի Հովհաննիսյանի, Աշոտ Պետրոսի Պետրոսյանի, Պայծառ Սերգեյի Նազարյանի նախաքննական ցուցմունքները, 11.11.2008թ.

գրությամբ ստացված կասկածելի գործարքների ցանկը, ետզանձումների գննության արձանագրությունները, Պետ. եկամուտների կոմիտեից ստացված գրությունը, 19.12.2008թ. վճիռը, բանկային քաղվածքը, ՀՀ Կենտրոնական բանկից ստացված գրությունը, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության 27.02.2009թ. գրությունը, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից ստացված փորձագետի եզրակացությունները, հանգեց այն հետևության, որ Մարիամ Հարությունյանը կատարել է խոշոր չափերի գումարի գողություն, ինչպես նաև օրինակացրել է հանցավոր ճանապարհով ստացված նույն գումարը, այսինքն, կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ:

Ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանը հաշվի առավ կատարված արարքների բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքների բացակայությունը:

Որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ դատարանը հաշվի առավ այն՝ որ Մարիամ Հարությունյանն իրեն լիովին մեղավոր ճանաչեց, գործուն զղջաց կատարած արարքների համար, երիտասարդ կին է, ըստ իր հայտարարության, ամուսինը դիմել է ամուսնալուծության պահանջով, հետևաբար պատիժն ազատազրկման ձևով կրելու պայմաններում, նրա 2 անչափահաս երեխաները մնում են առանց խնամքի, նախկինում դատապարտված ու արատավորված չի եղել, բնութագրվում է դրականորեն:

Հաշվի առնելով գործի հանգամանքներն ու ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները՝ դատարանը հանգեց այն հետևության, որ թեև կատարած հանցանքի համար ամբաստանյալ Մարիամ Հարությունյանը ենթակա է պատժի ազատազրկման ձևով, սակայն դատարանը աննպատակահարմար է համարում նրա կողմից պատիժը ազատազրկման ձևով կրելը հետևյալ պատճառաբանությամբ, հիմք ընդունելով նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները.

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար»:

ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները»:

ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի համաձայն, եթե դատարանը ազատազրկման ձևով պատիժ նշանակելով հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2007թ. հունիսի 12-ի թիվ ՎԲ-124/07 որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման կապակցությամբ արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ վկայակոչված հոդվածի կիրառումը հանցագործության տեսակի հետ կապված որևէ սահմանափակման չի ենթարկվում և դրա կիրառումը սահմանափակված չէ նաև հանցավոր արարքի վտանգավորության աստիճանով ու բնույթով, ինչպես նաև անձանց շրջանակով, որոնց նկատմամբ այն չի կարող կիրառվել:

ՀՀ վճռաբեկ դատարանը միաժամանակ նշել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը

|                               |  |
|-------------------------------|--|
|                               | <p>պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու»:</p> <p>Վերը նշվածները հիմք են տալիս եզրակացնելու, որ այդ պայմաններում Մարիամ Հարությունյանի կողմից կատարված հանցագործության հանրորեն վտանգավորության աստիճանը նվազել է ու նրա ուղղվելը հնարավոր է առանց նշանակվող ազատազրկման ձևով պատիժը կրելու, ուստի ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով պատիժը պետք է նրա նկատմամբ պայմանականորեն չկիրառել՝ սահմանելով փորձաշրջան:</p> <p>Պատիժ նշանակելիս դատարանը հաշվի առավ նաև այն, որ Մարիամ Հարությունյանը շուրջ 4 ամիս գտնվել է կալանքի տակ: Դեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-375, 375.1-375.4 հոդվածներով, դատարանը.</p> <p>Վ Ճ Ռ Ե Ց</p> <p>Մարիամ Միքայելի Հարությունյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով, նրան դատապարտել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 1-ին մասով 1/մեկ/ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով:</p> <p>Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածը՝ նշանակված պատիժները մասնակի գումարելով վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով:</p> <p>Կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածը՝ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել՝ սահմանել փորձաշրջան 2/երկու/ տարի ժամկետով, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության Մարիամ Հարությունյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնին, որի սկիզբը հաշվել նրան հաշվառման վերցնելու պահից:</p> <p>Մարիամ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացնել ու նրան անհապաղ ազատ արձակել դատարանի դահլիճից:</p> <p>Հանցագործությամբ պատճառած վնասը 2.983.000 ՀՀ դրամի չափով, բռնագանձել Մարիամ Հարությունյանից հօգուտ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ հիշյալ գումարը «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ից բռնագանձելու մասին: 19.02.2009թ. որոշմամբ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ում «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի հաշվեհամարի, ինչպես նաև 20.02.2009թ. որոշմամբ ք. Երևան, Ա. Մանուկյան 7, բն. 66 հասցեում «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի կողմից վարձակալած տարածքում գտնվող, ընկերությանը պատկանող գույքի վրա դրված կալանքը պահպանել՝ մինչև պատճառած վնասի հատուցումը:</p> <p>Դատավճիռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում, բացի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395 հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմքից:</p> |
| <b>Դատական ակտի ամսաթիվը:</b> | ԴԱՏԱԿՈՐ Ժ. ՎԱՐԴԱՆՅԱՆ<br>10-06-2009   |
| <b>Ամսաթիվ:</b>               | 29-06-2009   |
| <b>Այլ նշումներ:</b>          |  |

Որոշման բովանդակությունը:

ԵԿԴ/0073/01/09

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՄԱՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունիսի 2009թ. ք.Երևան

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը նախագահությամբ դատավոր Ժ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, քարտուղարությամբ Է.Ավետիսյանի, դեմբաց դատական նիստում քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի

Մարիամ Միքայելի Հարությունյանի

ծնված 16.08.1981թ., Երևան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, խնամքին 2 անչափահաս երեխա, աշխատում է որպես «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի տնօրեն, նախկինում չդատված, հաշվառված ք. Երևան, Հալաբյան 25 շենք, բն. 9 հասցեում, փաստացի բնակվում է ք. Երևան, Այգեստան 3-րդ փողոց, տուն 4 :

Պ Ա Ր Ջ Ե Ց

Վարույթ իրականացնող մարմինը Մարիամ Հարությունյանին մեղադրանք է առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով, այն բանում, որ նա հանդիսանալով «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի տնօրեն, Արմեն Պողոսի Հովհաննիսյանի օժանդակությամբ, ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ հափշտակել է գումարներ, ապա դրանք օրինականացրել է:

Մ.Հարությունյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, փաստացի կալանքի տակ է գտնվել 09.02.2009թ.-ից:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. դատավճռով Մարիամ Հարությունյանը ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով դատապարտվել է ազատազրկման 2 տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 1-ին մասով ազատազրկման 1/մեկ/ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակի գումարելով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2 տարի 6 ամիս ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70 հոդվածի կիրառմամբ պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է փորձաշրջան 2/երկու/ տարի ժամկետով:

Մարիամ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացվել է և նա անհապաղ ազատ է արձակվել դատարանի դահլիճից:

Ղատավճիռը օրինական ուժի մեջ չի մտել:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն անձը ազատվում է պատիժը կրելուց, եթե նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել:

Նույն որոշման 12-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն դատարանի վրա է դրված որոշման կատարումը, եթե անձանց նկատմամբ քրեական գործերը քննվել են, սակայն դատավճիռներն օրինական ուժի մեջ չեն մտել:

|   |  |
|---|--|
|   | <p>Տվյալ դեպքում, Մարիամ Հարությունյանի նկատմամբ ազատագրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան, իսկ 10.06.2009թ. կայացված դատավճիռը օրինական ուժի մեջ չի մտել, հետևաբար, նրա նկատմամբ կիրառելի է «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի որոշումը:</p> <p>Հիշյալ որոշման 9-րդ կետի համաձայն, համաներման որոշումը չի ազատում դատավճիռներով նշանակված լրացուցիչ պատիժներից, բացի գույքի բռնագրավումից, ուստի դատարանը գտնում է, որ Մարիամ Հարությունյանին պետք է ազատել նաև 10.06.2009թ. դատավճռով որպես լրացուցիչ պատիժ նշանակված գույքի բռնագրավումից:</p> <p>Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով և «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. որոշմամբ, դատարանը</p> <p><b>Ո Ր Ո Շ Ե Ց</b></p> <p>Մարիամ Միքայելի Հարությունյանին ազատել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. դատավճռով, ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով ազատագրկման, ինչպես նաև գույքի բռնագրավման ձևով նշանակված, սակայն նույն օրենսգրքի 70 հոդվածով սահմանված 2 տարի ժամկետով պայմանականորեն չկիրառված պատիժների կրումից՝ «Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, 9-րդ կետի և 12-րդ կետի 1-ին ա/ ենթակետի հիմքով: Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:</p> <p>Որոշման օրինակներն ուղարկել գործով մասնակցող դատախազին և Մարիամ Հարությունյանին:</p> <p>Որոշումը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով :</p> |
| Համաներման մասին որոշման ընդունման ամսաթիվ: | 19-06-2009   |
| Համաներման մասին որոշման կետ:               | 1  |
| Համաներման մասին որոշման ենթակետ:           | 2  |
| <b>Ամսաթիվ:</b>                             | <b>03-08-2009</b>  |
| <b>Գործը հանձնվել է գրասենյակ:</b>          | 12-08-2009   |
| <b>Էջերի քանակ:</b>                         | 314  |
| <b>Գործին կից նյութերը:</b>                 |  |
| <b>Գործն ուղարկվել է:</b>                   |  |
| <b>Ուր:</b>                                 |  |
| <b>Գրության համարը:</b>                     |  |
| <b>Գործը ստացվել է:</b>                     |  |
| <b>Ներկայացվել է դիմում միջնորդություն:</b> |  |

|                                       |                          |
|---------------------------------------|--------------------------|
| <b>Ամսաթիվ:</b>                       | 12-09-2009               |
| <b>Ամսաթիվ:</b>                       | 24-02-2010               |
| <b>Այլ նշումներ:</b>                  |                          |
| <b>Գործը հանձնվել է գրասենյակ:</b>    | 24-02-2010               |
| <b>Էջերի քանակ:</b>                   | 400                      |
| <b>Գործին կից նյութերը:</b>           |                          |
| <b>Այլ նշումներ:</b>                  |                          |
| <b>Ամսաթիվ:</b>                       | 05-03-2010               |
| <b>Էջերի քանակը:</b>                  | 400                      |
| <b>Գործին կից նյութերը:</b>           |                          |
| <b>Այլ նշումներ:</b>                  |                          |
| <b>Ղատական Գործ N: ԵԿԴ/0073/01/09</b> |                          |
| <b>Ամսաթիվ:</b>                       | 11-09-2009               |
| <b>Ամբաստանյալ</b>                    |                          |
| <b>Անձ</b>                            |                          |
| Անուն                                 | Մարիամ                   |
| Ազգանուն                              | Հարությունյան            |
| Հասցե                                 | չկա                      |
| <b>Հոդված_1</b>                       |                          |
| Հոդված                                | 177 Մաս 2 Կետ 2          |
| <b>Ղատկածություն:</b>                 |                          |
| <b>Պաշտպան</b>                        |                          |
| Անուն                                 | չկա                      |
| Ազգանուն                              | չկա                      |
| Հասցե                                 | չկա                      |
| <b>Պատիժ:</b>                         |                          |
| <b>Հոդված_2</b>                       |                          |
| Հոդված                                | 190 Մաս 1 Կետ 2          |
| <b>Խախտման միջոց:</b>                 | Կալանավորում             |
| <b>Ում կողմից է բերվել բողոքը:</b>    | Տուժող                   |
| <b>Բողոքը բերող անձը</b>              |                          |
| Անուն                                 | Արամ                     |
| Ազգանուն                              | Կարախանյան               |
| Հասցե                                 | ք. Երևան, Վարդանանց 18/2 |



|   |   |       |       |
|---|---|-------|-------|
| <b>Բողոքի բովանդակությունը:</b>                   | Բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.09թ. կայացրած դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին 11.08.09թ. որոշումը, կայացնել նոր որոշում Մ. Հարությունյանի կողմից դատարանին ներկայացրած դիմումը իր նկատմամբ 10.06.09թ. կայացված դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին մերժել: |       |       |
| <b>Բողոքի ստացման կարգը:</b>                      | Առձեռն հանձնվել է գրասենյակ   |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 11-09-2009  |       |       |
| <b>Չափահաս:</b>                                   | Այո   |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 16-09-2009  |       |       |
| <b>Նախագահող դատավոր</b>                          |   |       |       |
| <b>Դատարանի անվանում:</b>                         | Քրեական և զինվորական վերաք.   |       |       |
| <b>Դատավորի անուն:</b>                            | Արշակ Նշանի Խաչատրյան   |       |       |
| <b>Դատավոր</b>                                    |   |       |       |
| <b>Դատարանի անվանում:</b>                         | Քրեական և զինվորական վերաք.   |       |       |
| <b>Դատավորի անուն:</b>                            |   |       |       |
| <b>Այլ նշումներ:</b>                              |   |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 22-09-2009  |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 18-09-2009  |       |       |
| <b>Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:</b>          | չկա   |       |       |
| <b>Երբ:</b>                                       | 30-09-2009  |       |       |
| <b>Ուղարկվել է ծանուցագիր:</b>                    | 22-09-2009  |       |       |
| <b>Ժամ:</b>                                       | 11:00   |       |       |
| <b>Այլ նշումներ:</b>                              |   |       |       |
| <b>Նիստերի դահլիճի համարը:</b>                    | 3   |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 30-09-2009  |       |       |
| <b>Ստորադաս դատարանի դատական ակտը բեկանվել է:</b> | Բեկանվել է դատական ակտը և փոփոխվել  |       |       |
| <b>Ամբաստանյալ</b>                                |   |       |       |
| <b>Անուն</b>                                      | Մարիամ  |       |       |
| <b>Ազգանուն</b>                                   | Հարությունյան   |       |       |
| <b>Հասցե</b>                                      | ք.Երևան, Այգեստան 3-րդ փող.տուն 4   |       |       |
| <b>Սեռ</b>  | Իգական  |       |       |
| <b>Քր. դատ. օր. հոդված</b>                        |   |       |       |
| <b>Հոդված</b>                                     | 393-394   |       |       |
| <b>Քր. օր. հոդված</b>                             |   |       |       |
| <b>Հոդված</b>                                     | 177   | Մաս 2 | Կետ 2 |
| <b>Այլ նշումներ:</b>                              |   |       |       |

**Ղատական ակտ:**

Գործ հ. ԵԿԴ/0073/01/09  
Հ Ա Յ Ա Ս Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն  
Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Զ Ք Ր Ե Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  
30 սեպտեմբերի 2009թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻԶ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԸ  
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆԻ

ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Մ.ՄԱՀՏԵՍՅԱՆԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝

ՏՈՒԺՈՂ “ԿԱՍԿԱԴ ԲԱՆԿ”  
ՓԲԸ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ Ա.ԿԱՐԱԽԱՆՅԱՆԻ  
ՊԱՇՏՊԱՆ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ  
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Դռնբաց ղատական նիստում տուժող “Կասկադ-Բանկ” ՓԲԸ-ի ներկայացուցիչ Արամ Կարախանյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 0073/01/09 քրեական գործով 10.06.2009թ. կայացված դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին 11.08.2009թ. որոշման օրինականության և հիմնավորվածության հարցը

**Պ Ա Ր Զ Ե Ց**

1..Գործի ղատակարական նախապատմությունը և փաստական հանգամանքները

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. դատավճռով Մարիամ Միքայելի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ազատազրկման՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով 1/մեկ/ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակի գումարելով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2/երկու/տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2/երկու/ տարի ժամկետով, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության Մարիամ Հարությունյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնին, որի սկիզբը հաշվվել է նրան հաշվառման վերցնելու պահից:

Մարիամ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացվել է և նա անհապաղ ազատ է արձակվել դատարանի դահլիճից:

Միաժամանակ որոշվել է հանցագործությամբ պատճառված վնասը 2.963.000 ՀՀ դրամի չափով բռնագանձել Մարիամ Հարությունյանից

հոգուտ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ի, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ հիշյալ գումարը “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ից բռնագանձելու մասին:

Որոշվել է 19.02.2009թ. որոշմամբ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ում “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ի հաշվեհամարի, ինչպես նաև 20.02.2009թ. որոշմամբ ք.Երևան, Ա.Մանուկյան 7, բն. 66 հասցեում “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ի կողմից վարձակալած տարածքում գտնվող, ընկերությանը պատկանող գույքի վրա դրված կալանքը պահպանել՝ մինչև պատճառված վնասի հատուցումը:

Մարիամ Հարությունյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա հանդիսանալով 2007թ. մարտի 26-ին հիմնադրված և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշի տարածքային ստորաբժանումում գրանցված “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ի տնօրեն, Ալեք Մանուկյան 7 բն. 66 հասցեում գործող “Ֆեյշն Թայմ” խանութում զբաղվելով կանացի ջինսե հագուստի և աքսեսուարների մանրածախ առևտրով, Երևան քաղաքի բնակիչ Արմեն Պողոսի Հովհաննիսյանի օժանդակությամբ ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ “Master card” միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող “Արմենիան քարդ” ՓԲ ընկերության համակարգերի միջոցով գումարներ է հափշտակել, ապա դրանք օրինականացրել:

Այսպես. Մարիամ Հարությունյանը 2008թ. հոկտեմբերի 17-ին որպես վճարում է ընդունել “MBINA AMERIKA BANK” ամերիկյան բանկի կողմից թողարկված 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով, որի արդյունքում գողացված 2.983.000 դրամը փոխանցել է “Խ-ԴԷՄԻ” ՍՊ ընկերության “Կասկադ Բանկ” ՓԲ ընկերությունում սպասարկվող հաշվեհամարին:

Մարիամ Հարությունյանը գիտակցելով, որ վերը նշված խոշոր չափերի 2.983.000 դրամը /“MBINA AMERIKA BANK” ամերիկյան բանկի կողմից ետ պահանջված գումարը/ ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում և նպատակ ունենալով խեղաթյուրել այդ գումարի հանցավոր ծագումը այն կանխիկացրել է, որպես հասույթ մուտքագրել ընկերության դրամարկղ և հանցավոր ճանապարհով ստացված գումարը ցույց տալով ծախս, դրանից կատարել փոխանցումներ ընկերության հաշվեհամարից: Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հունիսի 29-ի որոշմամբ, հիմք ընդունելով “Համաներում հայտարարելու մասին” ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, 9-րդ կետի և 12-րդ կետի 1-ին ա ենթակետի պահանջները Մարիամ Հարությունյանը ազատվել է դատավճռով նշանակված պատիժը կրելուց:

Ղատավճիռը մնացած մասով թողնվել է անփոփոխ:

Նկատի ունենալով, որ Մ.Հարությունյանի վերաբերյալ դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ն դիմել է դատարան համապատասխան կատարողական թերթ տրամադրելու խնդրանքով, ինչի հիման վրա դատարանի կողմից 17.07.2009թ. տրվել է կատարողական թերթ:

11.08.2009թ. Մ.Հարությունյանը միջնորդություն է ներկայացրել դատարան, որով խնդրել է մեկնաբանել իր նկատմամբ կայացված դատավճռի անհստակությունը, այն է՝ 2.983.000 ՀՀ դրամի չափով գումարի բռնագանձման մասին դատավճռում նշում չպետք է կատարվեր, քանի որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ՝ նշված գումարը “Խ-ԴԷՄԻ” ՍՊ ընկերությունից բռնագանձելու մասին իսկ դատավճռով որոշվել է նույն գումարը բռնագանձել իրենից, ոչ թե ՍՊԸ-ից, որպիսի պայմաններում ստացվում է, որ նույն գումարը բռնագանձելու վերաբերյալ առկա է երկու դատական ակտ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի 4-րդ կետով իր

11.08.2009թ. որոշմամբ մեկնաբանել է Մարիամ Միքայելի Հարությունյանի նկատմամբ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 10.06.2009թ. կայացված դատավճռի ի կատար ածման ընթացքում ծագած անհստակությունը և գտել է, որ եզրակարգված մասում կատարված «Հանցագործությանը պատճառված վնասը 2.983.000 ՀՀ դրամի չափով բռնագանձել Մարիամ Հարությունյանից հոգուտ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ հիշյալ գումարը «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ից բռնագանձելու մասին» գրառումը կարող է հետևյալ կերպ.

«Հանցագործությանը 2.983.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ից հոգուտ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել այն պայմանով, եթե այդ գումարը բռնագանձելու պահանջի մասին արդեն իսկ առկա օրինական ուժի մեջ մտած 19.12.2008թ. վճիռը դեռևս կատարված չէ»:

Վերը նշված որոշման դեմ տուժող «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա. Կարախանյանը բերել է վերաքննիչ բողոք, որով խնդրել է բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 0073/01/09 քրեական գործով 10.06.2009թ. կայացված դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին 11.08.2009թ. որոշումը, կայացնել նոր դատական ակտ՝ Մարիամ Հարությունյանի կողմից դատարանին ներկայացված դիմումը իր նկատմամբ 10.06.2009թ. կայացված դատավճռի անհստակությունը մեկնաբանելու մասին մերժել: Վերաքննիչ բողոքի առթիվ գրավոր պատասխաններ չեն ստացվել: Նախագահող դատավորի 2009թ. սեպտեմբերի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը ընդունվել է վարույթ:

## 2. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Բողոք բերած անձը գտնում է, որ դատարանի որոշումը հակասում է ինչպես կայացված դատավճռին, այնպես էլ մի շարք դատավարական և նյութական օրենքի նորմերին բերելով հետևյալ պատճառաբանությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիական հայց կարող է հարուցվել կասկածյալի, մեղադրյալի կամ այն անձի դեմ, ով կարող է գույքային պատասխանատվություն կրել մեղադրյալի գործողությունների համար, հետևաբար գույքային պատասխանատվություն կրել մեղադրյալի գործողությունների համար, հետևաբար գույքային վնասի հատուցման պատասխանատվությունը կարող է դրվել վերոնշյալ անձանց վրա: Վերոհիշյալ քրեական գործով որպես մեղադրյալ հանդես է գալիս Մարիամ Հարությունյանը, որի կողմից կատարված հանցագործությանը քրեական գործով տուժող «Կասկադ Բանկ» ՓԲ ընկերությանը պատճառվել է նյութական վնաս՝ 2.983.000 դրամի չափով: Հանցագործությանը պատճառված նյութական վնասի հատուցման պարտավորությունը՝ պատասխանատվության բաղկացուցիչ է, որը կարող է դրվել միայն հանցագործություն կատարած անձի վրա, իսկ քաղաքացիական հայցը կարող է ներկայացվել մեղադրյալի կամ վերջինիս գործողությունների համար գույքային պատասխանատվություն կրող անձի դեմ:

Սույն քրեական գործի շրջանակներում քաղաքացիական հայց չի ներկայացվել և դատարանը ՀՀ քր. դատ. օր-ի 360 հոդվածի կարգով դատավճռում հաստատված համարելով, որ ամբաստանյալ Մարիամ Միքայելի Հարությունյանի կողմից կատարված հանցագործությանը տուժող «Կասկադ Բանկ» ՓԲ ընկերությանը պատճառվել է 2.983.000 ՀՀ դրամի վնաս, որոշել է ամբաստանյալից հոգուտ տուժողի բռնագանձել պատճառված վնասը:

Սակայն, հետագայում դատարանը իր 11.08.2009թ. որոշմամբ, մեկնաբանելով իր կայացրած դատավճռի վնասի բռնագանձման

մասը, որոշել է վնասը չբռնագանձել ամբաստանյալից: Մաժամանակ բողոքարկվող որոշմամբ դատարանը հանցագործությանը պատճառված վնասի բռնագանձումը կատարել է “Խ-ԴԷՄԻ” ՍՊ ընկերությունից, որը նշված քր. գործով չի հանդիսանում քաղաքացիական պատասխանող, կամ ամբաստանյալի գործողությունների համար պատասխանատվություն կրող անձ և առհասարակ, մեղադրյալ չի կարող հանդիսանալ, քանի որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 23 հոդվածի քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձ, ով հանցանք կատարելու պահին հասել է սույն օրենսգրքով սահմանված տարիքի: Ավելին, ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ կետի, դատարանը քաղաքացիական հայցով որոշում կայացնելիս պետք է գործի քաղաքացիական օրենսդրության շրջանակներում և հաշվի առնի նաև այն հանգամանքը, որ “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ն չի կարող գույքային պատասխանատվություն կրել մեղադրյալ Մարիամ Հարությունյանի գործողությունների համար, քանի որ ըստ “Սահմանափակ պատասխանատվության ընկերությունների մասին” ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ՍՊԸ-ն չի կարող պատասխանատվություն կրել իր մասնակիցների պարտավորությունների համար: Փաստորեն, դատարանը իր որոշմամբ անտեսել և խախտել է թե նյութական /ընդ որում և քրեաիրավական և քաղաքացիաիրավական/ և թե դատավարական նորմերի պահանջները:

Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի բողոքարկվող որոշումը՝ դատավճռի անհստակությունները մեկնաբանելու մասին, հանդիսանում է դատարանի որոշում հանցագործությանը պատճառված վնասի հատուցման մասին, ինչը հանդիսանում է այդ մասով գործն ըստ էության լուծող դատական ակտ: Համաձայն ՀՀ քր. դատ. օր. 376.1 հոդվածի. “առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը”:

Բողոքարկվող դատական ակտը նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումների հիմքով են բողոքարկվում, որոնք ըստ էության խախտում են արդարադատության բուն էությունը:

3. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով քրեական գործի համապատասխան նյութերը, վերաքննիչ դատարանը հանգում է այն հետևության, որ վերաքննիչ բողոքում բերված պատճառաբանությունները հիմնավոր են, դրանք բխում են ինչպես գործի փաստական հանգամանքներից, այնպես էլ գործող օրենսդրության պահանջներից, ուստի այն պետք է բավարարել:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի՝ դատավճիռը կամ այլ դատական որոշում կայացրած դատարանն իրավունք ունի լուծել դրա ի կատար ածման ընթացքում ծագած կասկածները և անհստակությունները, մասնավորապես՝ հստակ որոշել հաշվարկվող պատժի չափը, եթե դատավճռում այն սահմանված չէ, լուծել խափանման միջոցների, դատական ծախսերը վերաբաշխելու և իրեղեն ապացույցների ձակատագրի հարցը, եթե այն լուծված չի եղել ոչ հստակ, մեկնաբանել իր որոշումների անհստակությունները:

Այսինքն, երբ կայացված դատական ակտում առկա են որոշակի անհստակություններ, որոնք ի հայտ են գալիս դատական ակտի ի կատար ածման ընթացքում վերը վկայակոչված նորմի հիման վրա,

դատարանն իրավունք ունի մեկնաբանել անհատակությունները կամ լուծել կասկածները: Դա նշանակում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 430 հոդվածը նախատեսում է հնարավորություն դատական ակտում տեղ գտած անհատակությունները շտկել այն կատարելու ընթացքում: Սակայն նորմը չի սահմանում դատական ակտը ըստ էության փոփոխելու հնարավորություն:

Վերաքննիչ դատարան ներկայացված քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի որոշումն ի կատար ածող մարմինների մոտ դրա ի կատար ածման հետ կապված որևէ կասկած կամ անհատակություններ չեն առաջացել: Դատարանի դատավճռի պատճառված վնասի հատուցման մասով անհամաձայնություն է առաջացել գործով դատապարտյալ Մ.Հարությունյանի մոտ, որն էլ գրկված չէ օրենքով սահմանված կարգով դատավճիռը բողոքարկելու հնարավորությունից:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանը դուրս է եկել իրեն վերապահված լիազորությունների շրջանակներից, քանի որ որոշման բովանդակությունից ակնհայտ է, որ դատարանը ոչ թե մեկնաբանել է դատավճռի անհատակությունները, այլ փոխել է դատավճռով վնասի բռնագանձման մասով իր որոշումը և կայացրել նոր որոշում, որը ուղղակի հակասում է ինչպես կայացված դատավճռին, այնպես էլ գործող օրենսդրության պահանջներին: Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-394-րդ հոդվածներով վերաքննիչ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Տուժող “Կասկաղ Բանկ” ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ա.Կարախանյանի վերաքննիչ բողոքը բավարարել:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի ԵԿԴ/0073/01/09 քրեական գործով 10.06.2009թ. կայացված դատավճռի անհատակությունը մեկնաբանելու մասին 11.08.2009թ. որոշումը բեկանել:

Թիվ ԵԿԴ/0073/01/09 քրեական գործով Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Մարիամ Միքայելի Հարությունյանի` ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 1-ին մասով, թողնել անփոփոխ, իսկ Մարիամ Հարությունյանի միջնորդությունը դատավճռի անհատակությունները մեկնաբանելու մասին` մերժել:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարանին այն ստանալու պահից 15-օրյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

|                        |                             |
|------------------------|-----------------------------|
| Դատական ակտի ամսաթիվը: | 30-09-2009                  |
| Գործն ուղարկվել է:     | 02-10-2009                  |
| Էջերի քանակը:          | 0                           |
| Գործին կից նյութերը:   |                             |
| Գործն ուղարկվել է:     |                             |
| Ուր:                   | Քրեական և զինվորական վերաք. |
| Գրության համարը:       |                             |
| Այլ նշումներ:          |                             |

|  |          |                                |       |       |
|--|----------|--------------------------------|-------|-------|
| <b>Ամսաթիվ:</b>  |          | 20-10-2009                     |       |       |
| <b>Ամբաստանյալ</b>   |          |                                |       |       |
| <b>Անձ</b>   |          |                                |       |       |
|  | Անուն    | Մարիամ                         |       |       |
|  | Ազգանուն | Հարությունյան                  |       |       |
|  | Հասցե    | չկա                            |       |       |
| <b>Հոդված_1</b>  |          |                                |       |       |
|  | Հոդված   | 177                            | Մաս 2 | Կետ 2 |
| <b>Ղատկածություն:</b>  |          |                                |       |       |
| <b>Պաշտպան</b>   |          |                                |       |       |
|  | Անուն    | Անահիտ                         |       |       |
|  | Ազգանուն | Մարտիրոսյան                    |       |       |
|  | Հասցե    | ք. Երևան, Կ. Ուլնեցի 66 բն. 41 |       |       |
| <b>Պատիժ:</b>  |          |                                |       |       |
| <b>Հոդված_2</b>  |          |                                |       |       |
|  | Հոդված   | 190                            | Մաս 1 |       |
| <b>Խախտման միջոց:</b>  |          |                                |       |       |
| Կալանավորում   |          |                                |       |       |
| <b>Ուն կողմից է բերվել բողոքը:</b>   |          |                                |       |       |
| Պաշտպան  |          |                                |       |       |
| <b>Բողոքը բերող անձը</b>   |          |                                |       |       |
|  | Անուն    | Անահիտ                         |       |       |
|  | Ազգանուն | Մարտիրոսյան                    |       |       |
|  | Հասցե    | ք. Երևան, Կ. Ուլնեցի 66 բն. 41 |       |       |
| <b>Բողոքի բովանդակությունը:</b>  |          |                                |       |       |
| <p>Մարիամ Միքայելի Հարությունյան /ՀՀ քր.օր. 177 հոդ. 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդ. 1-ին մասով - 2 տարի 6 ամիս ազ., ՀՀ քր.օր. 70 հոդ. կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2 տարի ժամկետով , նաև հոգուտ &lt;&lt;Կասկաղ Բանկ&gt;&gt; ՓԲԸ բռնագանձվել է հանցագործությամբ պատճառված վնասը 2.983.000 դրամի չափով / : Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 16.10.2009թ. որոշմամբ հարգելի է համարվել և վերականգնվել է նույն համայնքների 10.06.2009թ. դատավճիռը պատճառված վնասի հատուցման հարցի լուծմանը վերաբերող մասով Մարիամ Հարությունյանի կողմից բողոքարկելու բաց թողնված ժամկետը : Մասնակիորեն բեկանել Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. դատավճիռը պատճառված վնասի վերականգնման մասով և փոփոխել այն` հաշվի առնելով , որ Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.12.2008թ. դատավճիռով &lt;&lt;Կասկաղ Բանկ&gt;&gt; ՓԲԸ քաղաքացիական հայցն ընդդեմ &lt;&lt;Խ-ԴԷՄԻ&gt;&gt; ՍՊՈ-ն գումարի բռնագանձման պահանջով բավարարվել է ամբողջությամբ 3.042.660 դրամի չափով , որից պատճառված վնասի գումարը կազմել է 2.983.000 դրամ</p> |          |                                |       |       |
| <b>Բողոքի ստացման կարգը:</b>   |          |                                |       |       |
| Առձեռն հանձնվել է գրասենյակ  |          |                                |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>  |          |                                |       |       |
| 20-10-2009   |          |                                |       |       |
| <b>Չափահաս:</b>  |          |                                |       |       |
| Այո  |          |                                |       |       |
| <b>Ամսաթիվ:</b>  |          |                                |       |       |
| 21-10-2009   |          |                                |       |       |
| <b>Նախագահող դատավոր</b>   |          |                                |       |       |
| <b>Ղատարանի անվանում:</b>  |          |                                |       |       |
| Քրեական և զինվորական վերաք.  |          |                                |       |       |

|   |   |       |  |
|---|---|-------|--|
| Դատավորի անուն:                                   | Արշակ Նշանի Խաչատրյան   |       |  |
| <b>Դատավոր</b>                                    |   |       |  |
| Դատարանի անվանում:                                | Քրեական և զինվորական վերաք.   |       |  |
| Դատավորի անուն:                                   |   |       |  |
| <b>Այլ նշումներ:</b>                              |   |       |  |
|   |   |       |  |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 05-11-2009  |       |  |
|   |   |       |  |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 18-09-2009  |       |  |
| <b>Կից փաստաթղթեր և իրեղեն ապացույց:</b>          | չկա   |       |  |
|   |   |       |  |
| <b>Երբ:</b>                                       | 17-11-2009  |       |  |
| <b>Ուղարկվել է ծանուցագիր:</b>                    | 05-11-2009  |       |  |
| <b>Ժամ:</b>                                       | 14:00   |       |  |
| <b>Այլ նշումներ:</b>                              |   |       |  |
| <b>Նիստերի դահլիճի համարը:</b>                    | 3   |       |  |
|   |   |       |  |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 17-11-2009  |       |  |
| <b>Ստորադաս դատարանի ակտը բեկանվել է մասնակի:</b> | Մասնակի բեկանվել է դատական ակտը և բեկանված մասով փոփոխվել   |       |  |
| <b>Ամսաթիվ:</b>                                   | 17-11-2009  |       |  |
| <b>Ամբաստանյալ</b>                                |   |       |  |
| <b>Անուն</b>                                      | Մարիամ  |       |  |
| <b>Ազգանուն</b>                                   | Հարությունյան   |       |  |
| <b>Հասցե</b>                                      | ք. Երևան, Հալաբյան փող.25/9   |       |  |
| <b>Քր. դատ. օր. հոդված</b>                        |   |       |  |
| <b>Հոդված</b>                                     | 393-395   | Մաս 2 |  |
| <b>Քր. օր. հոդված</b>                             |   |       |  |
| <b>Հոդված</b>                                     | 177   | Մաս 2 |  |
| <b>Այլ նշումներ:</b>                              |   |       |  |
|   |   |       |  |
| <b>Դատական ակտ:</b>                               | <p>Գործ հ. ԵԿԴ/0073/01/09</p> <p>Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն<br/>Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Ք Ր Ե Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն</p> <p>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ<br/>Հ Ա Ն Ո Ւ Ն Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն</p> <p>17 նոյեմբերի 2009թ. ք. Երևան</p> <p>Հ Ա Յ Ա Ս Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ի Չ Ք Ր Ե Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ը<br/>Դ Ա Տ Ա Ր Ա Ն Ը<br/>Հ Ե Տ Ե Վ Յ Ա Լ Կ Ա Ջ Մ Ո Վ</p> <p>Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ղ Դ Ա Տ Ա Կ Ո Ր՝ Ա. Խ Ա Չ Ա Տ Ր Յ Ա Ն Ի<br/>Դ Ա Տ Ա Կ Ո Ր Ն Ե Ր՝ Մ. Մ Ի Մ Ո Ն Յ Ա Ն Ի</p> |       |  |



Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Մ.ՄԱՀՏԵՍՅԱՆԻ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝

ՄԵՂԱԴՐՈՂ՝ Հ.ՍԱՐԳՍՅԱՆԻ  
ՊԱՇՏՊԱՆ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ  
ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ՝ Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ  
ԴԱՏԱՊԱՐՅԱԼ՝ Մ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Դռնբաց դատական նիստում դատապարտյալ Մ.Հարությունյանի շահերի պաշտպան, փաստաբան Ա.Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործն ըստ մեղադրանքի Մարիամ Միքայելի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 1-ին մասով

Պ Ա Ր Զ Ե Ց

1..Գործի դատավարական նախապատմությունը

ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում 02.02.2009թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 58201009 քրեական գործը:

09.02.2009թ. Մարիամ Հարությունյանը ձերբակալվել է: 2009թ. փետրվարի 11- որոշմամբ Մարիամ Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

04.05.2009թ. որոշմամբ մեղադրյալ Մարիամ Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նույն օրվա մեկ այլ որոշմամբ Մ.Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:

06.05.2009թ. քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան /այսուհետ՝ դատարան/:

Դատարանի 10.06.2009թ. դատավճռով Մարիամ Միքայելի Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190 հոդվածի 1-ին մասով և դատապարտվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով ազատազրկման 2/երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով ազատազրկման՝ 1/մեկ/ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով, ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակի գումարելով վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2/երկու/ տարի ժամկետով, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության Մարիամ Հարությունյանի բնակության վայրի այլընտրանքային պատիժների կատարման բաժնին, որի սկիզբը հաշվվել է նրան հաշվառման վերցնելու պահից:

Մարիամ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանքը վերացվել է և նա անհապաղ ազատ է արձակվել դատարանի դահլիճից:

Միաժամանակ որոշվել է հանցագործությամբ պատճառված վնասը 2.983.000 ՀՀ դրամի չափով բռնագանձել Մարիամ Հարությունյանից հոգուտ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ի, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ հիշյալ գումարը “Խ-ՂԵՄԻ” ՍՊԸ-ից բռնագանձելու մասին:

Որոշվել է 19.02.2009թ. որոշմամբ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ում “Խ-ՂԵՄԻ” ՍՊԸ-ի հաշվեհամարի, ինչպես նաև 20.02.2009թ. որոշմամբ ք.Երևան, Ա.Մանուկյան 7, բն. 66 հասցեում “Խ-ՂԵՄԻ” ՍՊԸ-ի կողմից վարձակալած տարածքում գտնվող, ընկերությանը պատկանող գույքի վրա դրված կալանքը պահպանել՝ մինչև պատճառված վնասի հատուցումը:

Նույն դատարանի՝ “Համաներում հայտարարելու մասին” ՀՀ Ազգային ժողովի 19.06.2009թ. որոշմամբ 1-ին կետի 2-րդ ենթակետի, 9-րդ կետի և 12-րդ կետի 1-ին ա/ ենթակետի հիմքով, 29.06.2009թ. որոշմամբ Մարիամ Հարությունյանն ազատվել է հիշյալ դատավճռով նշանակված պատիժների կրումից՝ դատավճիռը մնացած մասով թողնելով անփոփոխ:

Մարիամ Հարությունյանի դիմումի հիման վրա դատարանի 11.08.2009թ. որոշմամբ վնասի հատուցման մասով մեկնաբանվել է հիշյալ դատավճռի անհատակությունը, այն է՝ “Հանցագործությամբ 2.983.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը “Խ-ՂԵՄԻ” ՍՊԸ-ից հոգուտ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ի բռնագանձել այն պայմանով, եթե այդ գումարը բռնագանձելու պահանջի մասին արդեն իսկ առկա օրինական ուժի մեջ մտած 19.12.2008թ. վճիռը դեռևս կատարված չէ”:

Վերը նշված որոշումը “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ի ներկայացուցչի բողոքի հիման վրա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 30.09.2009թ. որոշմամբ բեկանվել է՝ դատավճիռը թողնելով անփոփոխ:

Մարիամ Հարությունյանը 05.10.2009թ. միջնորդությամբ դատարանին խնդրել է հարգելի համարել դատավճռի բողոքարկման ժամկետի բացթողնման պատճառը և վերականգնել դատավճիռը բողոքարկելու բաց թողնված ժամկետը՝ վնասի հատուցման հարցի լուծմանը վերաբերող դատավճռի մասը բողոքարկելու նպատակով:

Դատարանն իր 16.10.2009թ. որոշմամբ հարգելի է համարել Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. թիվ ԵԿԴ/0073/01/09 դատավճիռը պատճառված վնասի հատուցման հարցի լուծմանը վերաբերող մասով Մարիամ Հարությունյանի կողմից վերաքննության կարգով բողոքարկելու բաց թողնված ժամկետն ու այն վերականգնել:

Դատարանի 10.06.2009թ. դատավճռի դեմ Մարիամ Հարությունյանի շահերի պաշտպան Անահիտ Մարտիրոսյանը 20.10.2009թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ բողոքի առթիվ գրավոր պատասխաններ չեն ստացվել: Վերաքննիչ դատարանի 05.11.2009թ. որոշմամբ վերաքննիչ բողոքը ընդունվել է վարույթ և գործը նշանակվել քննության վճռաբեկ դատարանում գործի քննության համար սահմանված կանոններով

## 2.Գործի փաստական հանգամանքները

Մարիամ Հարությունյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա հանդիսանալով 2007թ. մարտի 26-ին հիմնադրված և իրավաբանական անձանց պետական ռեզիստրի Նորք-Մարաշի տարածքային ստորաբաժանումում գրանցված “Խ-ՂԵՄԻ” ՍՊԸ-ի տնօրեն, Ալեք Մանուկյան 7 բն. 66 հասցեում գործող “Ֆեյշն Թայմ” խանութում զբաղվելով կանացի ջինսե հագուստի և աքսեսուարների մանրածախ առևտրով, Երևան քաղաքի բնակիչ Արմեն Պողոսի Հովհաննիսյանի օժանդակությամբ ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ “Master card” միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող

“Արմենիան քարդ” ՓԲ ընկերության համակարգերի միջոցով գումարներ է հափշտակել, ապա դրանք օրինականացրել է Այսպես.

Մարիամ Հարությունյանը 2008թ. հոկտեմբերի 17-ին դրպես վճարում է ընդունել “MBINA AMERIKA BANK” ամերիկյան բանկի կողմից թողարկված 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով, որի արդյունքում գողացված 2.983.000 դրամը փոխանցել է “Խ-ԴԷՄԻ” ՍՊ ընկերության “Կասկադ Բանկ” ՓԲ ընկերությունում սպասարկվող հաշվեհամարին:

Մարիամ Հարությունյանը գիտակցելով, որ վերը նշված խոշոր չափերի 2.983.000 դրամը /“MBINA AMERIKA BANK” ամերիկյան բանկի կողմից ետ պահանջված գումարը/ ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում և նպատակ ունենալով խեղաթյուրել այդ գումարի հանցավոր ծագումը այն կանխիկացրել է, որպես հասույթ մուտքագրել ընկերության դրամարկղ և հանցավոր ձանապարհով ստացված գումարը ցույց տալով ծախս, դրանից կատարել փոխանցումներ ընկերության հաշվեհամարից:

### 3..Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում, ներքոհիշյալ հիմնավորումներով:

Բողոք բերած անձը գտնում է, սույն գործի դատական քննության ընթացքում թույլ են տրվել դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնց արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը՝ մասնավորապես.

Խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի նորմերը, և դատարանը գործով հավաքված ապացույցները, այն է՝ 19.12.2008թ. վճիռը բազմակողմանի չի ստուգել՝ ձեռք բերված այլ ապացույցների հետ համադրելով: Խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի նորմերը, և հաշվի չի առնվել 19.12.2008 թվականին օրինական ուժի մեջ մտած քաղաքացիական գործով դատարանի վճիռը, որն ըստ էության արդեն իսկ լուծել էր քաղաքացիական հայցի հարցը: Քաղաքացիական գործով դատարանը գտել էր, որ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ի և “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ի միջև 51.08.2008թ. կնքված թիվ Մ76 պայմանագրի ուժով վերջիններս միմյանց հետ գտնվում են քաղաքացիաիրավական հարաբերություններում: Միևնույն ժամանակ դատարանը կիրառել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 և 1075 հոդվածները գտնելով, որ վնասն իրական է և գոյություն ունի 2.983.000 դրամի չափով, և որ հայցը ենթակա է բավարարման ամբողջությամբ:

Խախտվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածի նորմը, որի համաձայն “Նույն քաղաքացիական հայցով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը, հայցից քաղաքացիական հայցվորի հրաժարումն ընդունելու կամ հաշտության համաձայնությունը հաստատելու մասին դատարանի որոշումը, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը, որով հայցը մերժվել կամ լրիվ կամ մասնակի բավարարվել է, բացառում է քաղաքացիական հայցի հարուցումը”: Սակայն ըստ էության տուժող “Կասկադ Բանկ” ՓԲԸ քաղաքացիական հայցն ընդդեմ “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ 19.12.2008թ. բավարարելուց հետո “Կասկադ Բանկ” ՓԲԸ երկրորդ անգամ նույն վնասի հատուցման իրավունք է ձեռք բերում դատավճռով, այս անգամ Մ.Հարությունյանից, մինչ դեռ վնասի հատուցման հարցին քաղաքացիական գործով կայացված դատական ակտով դատարանն արդեն իսկ արդարադարձել էր “Կասկադ Բանկ” ՓԲԸ հայցադիմումի հիման վրա. ընդդեմ “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ և վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Խախտվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 358-րդ հոդվածի նորմերը, համաձայն որի՝ “Դատարանի դատավճիռը

պետք է լինի օրինական և հիմնավորված”:

10.06.2009թ. դատավճռով եզրափակվիչ մասում տեղ գտած դատարանի այն եզրահանգումը, որ “հանցագործությամբ պատճառված վնասը 2.983.000 ՀՀ դրամի չափով, պետք է բռնագանձել Մարիամ Հարությունյանից հօգուտ “Կասկադ Բանկ” ՓԲԸ նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ հիշյալ գումարը “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ից բռնագանձելու մասին”, կատարված է ոչ ճիշտ, քանի որ, եթե դատարանը նկատի է ունեցել, որ առկա է 2.983.000 ՀՀ դրամի չափով գումարի բռնագանձման վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած 19.12.2008թ. վճիռը՝ գումարը “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ից բռնագանձելու մասին, ապա նույն գումարը Մարիամ Հարությունյանից բռնագանձելու վերաբերյալ եզրահանգումը չի կարող դիտվել հիմնավորված և պատճառաբանված:

Բողոք բերած անձը գտնում է նաև, որ եթե դատարանը դատավճիռի եզրափակիչ մասում հաշվի է առել 19.12.2008թ. վճիռը, ապա պատճառված գույքային վնասի հատուցմանը չպետք է անդրադառնար, քանի որ պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ “Կասկադ Բանկ” ՓԲԸ քաղաքացիական հայցն ընդդեմ “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ն բավարարվել էր ամբողջությամբ, իսկ անդրադառնալիս էլ պետք է հաշվի առնել, որ տվյալ վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական հայցն արդեն իսկ 19.12.2008 թվականին լուծվել էր Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Ելնելով վերոգրյալներից բողոք բերած անձը խնդրել է մասնակիորեն բեկանել Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 10.06.2009թ. դատավճիռը պատճառված վնասի վերականգնման մասով, փոփոխել այն՝ հաշվի առնելով, որ 19.12.2008թ. Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի վճռով “Կասկադ Բանկ” ՓԲԸ քաղաքացիական հայցն ընդդեմ “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ն գումարի բռնագանձման պահանջով բավարարվել է ամբողջությամբ 3.042.660 դրամի չափով, որից պատճառված վնասի գումարը կազմել է 8.983.000 դրամ:

#### 4. Կերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Կերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, վերաքննիչ դատարանը գտնում է, որ պաշտպանի վերաքննիչ բողոքը պետք է բավարարել հետևյալ պատճառաբանությամբ: Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի դրույթների՝ դատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը՝... քաղաքացիական հայցը ենթակա է արդյոք բավարարման, ում օգտին և ինչ չափով, ինչպես նաև պատճառված գույքային վնասը ենթակա է արդյոք հատուցման, եթե քաղաքացիական հայց չի հարուցվել:

Ըստ նույն օրենսգրքի 158-րդ հոդվածի պահանջների՝

1. Քրեական դատավարությունում քաղաքացիական հայց կարող է հարուցվել յուրաքանչյուր պահի՝ սկսած քրեական գործի հարուցումից մինչև դատավճիռ կայացնելու համար դատարանի հեռանալը խերհրդակցական սենյակ:

2. Քաղաքացիական հայց հարուցվում է կասկածյալի, մեղադրյալի կամ նրա դեմ, ու վրա կարող է գույքային պատասխանատվություն դրվել մեղադրյալի գործողությունների համար:

3. Հայցադիմումում նշվում է, թե որ քրեական գործով, ով, ում, ինչի հիման վրա և ինչ չափով է հարուցում քաղաքացիական հայց, ինչպես նաև պետք է բովանդակի խնդրանք՝ վնասի հատուցման համար կոնկրետ դրամական գումարի և գույքի բռնագանձման մասին:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քրեական վարույթն իրականացնող մարմնի 11.02.2009թ. որոշմամբ “Կասկադ Բանկ” ՓԲ ընկերությունը ճանաչվել է սույն գործով որպես տուժող:

Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ տուժողը ինչպես գործի մինչդատական վարույթի, այնպես էլ դատաքննության ընթացքում քաղաքացիական հայց չի հարուցել, այսինքն տուժողին պատճառված վնասի հատուցման հարցը չէր կարող լուծվել քաղաքացիական հայցի շրջանակներում, այդպիսին չլինելու պատճառով:

Սույն քրեական գործով ամբաստանյալ Մ.Հարությունյանը մեղադրվել և դատապարտվել է այն բանի համար, որ նա հանդիսանալով 2007թ. մարտի 26-ին հիմնադրված և իրավաբանական անձանց պետական ռեզիստրի Նորք-Մարաշի տարածքային ստորաբժանումում գրանցված “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ի տնօրեն, Ալեք Մանուկյան 7 բն. 66 հասցեում գործող “Ֆեյշն Թայմ” խանութում զբաղվելով կանացի ջինսե հագուստի և աքսեսուարների մանրածախ առևտրով, Երևան քաղաքի բնակիչ Արմեն Պողոսի Հովհաննիսյանի օժանդակությամբ ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ “Master card” միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող “Արմենիան քարդ” ՓԲ ընկերության համակարգերի միջոցով գումարներ է հափշտակել, ապա դրանք օրինականացրել: Այսպես.

Մարիամ Հարությունյանը 2008թ. հոկտեմբերի 17-ին որպես վճարում է ընդունել “MBINA AMERIKA BANK” ամերիկյան բանկի կողմից թողարկված 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով, որի արդյունքում գողացված 2.983.000 դրամը փոխանցել է “Խ-ԴԷՄԻ” ՍՊ ընկերության “Կասկադ Բանկ” ՓԲ ընկերությունում սպասարկվող հաշվեհամարին:

Մարիամ Հարությունյանը գիտակցելով, որ վերը նշված խոշոր չափերի 2.983.000 դրամը /“MBINA AMERIKA BANK” ամերիկյան բանկի կողմից ետ պահանջված գումարը/ ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում և նպատակ ունենալով խեղաթյուրել այդ գումարի հանցավոր ծագումը այն կանխիկացրել է, որպես հասույթ մուտքագրել ընկերության դրամարկղ և հանցավոր ճանապարհով ստացված գումարը ցույց տալով ծախս, դրանից կատարել փոխանցումներ ընկերության հաշվեհամարից:

Սրա հետ մեկտեղ քրեական գործում առկա է Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 19.12.2008թ. վճիռը քաղաքացիական գործով ըստ “Կասկադ Բանկ” ՓԲ-ի հայցն ընդդեմ “Խ-ԴԷՄԻ” ՍՊ ընկերության գումարի բռագանձման պահաջի մասին, որով “Կասկադ Բանկ” ՓԲ ընկերության հայցը բավարարվել է և “Խ-ԴԷՄԻ” սահմանափակ պատասխանատվության ընկերությունից հօգուտ “Կասկադ Բանկ” փակ բաժնետիրական ընկերության վճռվել է բռնագանձել 3.042.660 ՀՀ դրամ, որից 2.983.000 ՀՀ դրամ՝ կրած վնասի գումարը, 59.660 ՀՀ դրամ, որպես վճարված պետական տուքի գումար:

Դատարանի հիշյալ վճիռը չի վերացվել և մտել է օրինական ուժի մեջ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը պարտադիր է բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց համար ու ենթակա է կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի պահանջների՝ բացառիկ դեպքերում, երբ քաղաքացին զրկված է իր գույքային շահերն անձամբ պաշտպանելու հնարավորությունից, դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել հանցագործության հետևանքով պատճառված վնասը հատուցելու մասին:

Այտեղ հարկ է նշել, որ սույն քրեական գործով տուժողը քաղաքացի չի հանդիսացել, այլ հանդիսացել է իրավաբանական անձ, բացի այդ վերաքննիչ դատարանը հաշվի առնելով տուժողի կարգավիճակը գտնում է, որ վերջինս զրկված չի եղել իր գույքային շահերը պաշտպանելու հնարավորությունից, դեռ ավելին՝ քաղաքացիական դատավարության կարգով հայց է հարուցել դատարան՝ վնասի հատուցման պահանջով, որն էլ բավարարվել է ճիշտ այն գումարի չափով, ինչ ծավալով մեղադրանք է առաջադրվել և դատապարտվել ամբաստանյալ Մ.Հարությունյանը:  
Այս պայմաններում վերաքննիչ դատարանը գտնում է, որ դատարանի հետևությունները այն մասին, որ հանցագործությամբ պատճառված վնասը՝ 2.983.000 ՀՀ դրամը պետք է բռնագանձել Մ.Հարությունյանից հոգուտ “Կասկադ Բանկ” ՓԲԸ-ի, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ՝ հիշյալ գումարը “Խ-ԴԷՄԻ” ՍՊԸ-ից բռնագանձելու մասին, անհիմն է և չի բխում գործող օրենսդրության պահանջներից, ուստի դատավճիռը հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով պետք է բեկանել և սույն քրեական գործով, ինչպես քաղաքացիական հայցի, այնպես էլ պատճառված վնասի հատուցման հարցը պետք է համարել լուծված: Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-395-րդ, հոդվածներով վերաքննիչ դատարանը

#### Ո Ր Ո Շ Ե Ց

Դատապարտյալ Մ.Հարությունյանի շահերի պաշտպան Ա.Մարտիրոսյանի վերաքննիչ բողոքը բավարարել:  
Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009թ. հունիսի 10-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի Մարիամ Միքայելի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով՝ բեկանել:  
Քաղաքացիական հայցի և հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հարցը՝ սույն քրեական գործի շրջանակներում համարել լուծված:  
Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:  
Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ այն հրապարակելու պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ  
Իսկականի հետ ձիշտ է՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ Մ.ՍԻՄՈՆՅԱՆ

Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն  
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ՝ ստորագրություններ  
Իսկականի հետ ձիշտ է՝

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

|                                |  |                                |
|--------------------------------|--|--------------------------------|
|                                |  | ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱԿՈՐ՝ Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ |
|                                |  | ԴԱՏԱԿՈՐՆԵՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ     |
|                                |  | Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ                    |
|                                |  | Դատական ակտի ամսաթիվը:         |
| Ամսաթիվ:                       |  | 23-12-2009                     |
| Էջերի քանակը:                  |  | 384                            |
| Գործին կից նյութեր:            |  |                                |
| Այլ նշումներ:                  |  |                                |
| Գործն ուղարկվել է:             |  | 23-12-2009                     |
| Էջերի քանակը:                  |  | 1հատոր՝ 384թերթ                |
| Գործին կից նյութերը:           |  |                                |
| Ուր:                           |  | Վճռաբեկ                        |
| Գրության համարը:               |  | Ե-13739/09                     |
| Այլ նշումներ:                  |  |                                |
| Ամսաթիվ:                       |  | 02-03-2012                     |
| Դատական Գործ N: ԵԿԴ/0073/01/09 |  |                                |



|  |   |
|--|---|
| <b>Ամսաթիվ:</b>                              | 17-12-2009                                    |
| <b>Բողոք բերող անձինք:</b>                   | Տուժողի ներկայացուցիչ                         |
| <b>Բողոք բերող անձինք</b>                    |   |
| Անուն  | Արամ  |
| Ազգանուն                                     | Կարախանյան                                    |
| Հասցե  | տուժող „Կասկադ Բանկ,, ՓԲԸ` ք.Երեվան Դեղատան 6 |
| Այլ  | ամբաստանյալ` Մարիամ Միքայելի Հարությունյան    |
| <b>Հավատարմագրված փաստաթան</b>               |   |
| Անուն  |   |
| Ազգանուն                                     |   |
| Հասցե  |   |
| <b>Պատապարտյալ</b>                           |   |
| Անուն  |   |
| Ազգանուն                                     |   |
| Հասցե  |   |
| <b>Չափահաս:</b>                              | Այո   |
| <b>Պատասխանի ստացման ամսաթիվը:</b>           |   |
| <b>Պատասխանի բովանդակությունը:</b>           |   |
| <b>Գործի առաջման ամսաթիվը:</b>               | 23-12-2009                                    |
| <b>Գրության համարը:</b>                      | Ե-13739                                       |
| <b>Գործի ստացման ամսաթիվը:</b>               | 29-12-2009                                    |
| <b>Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:</b>  | 1 հատոր                                       |
| <b>Պատապարտյալ</b>                           |   |
| Անուն  |   |
| Ազգանուն                                     |   |
| Հասցե  |   |
| <b>Գործի համարը:</b>                         | ԵԿԴ/0073/01/09                                |
| <b>Գործը ստացվել է:</b>                      | Քրեական և զինվորական վերաք.                   |
| <b>Գործը ստացվել է:</b>                      |   |
| <b>Գործը ստացվել է:</b>                      |   |
| <b>Պատասխանատվության ենթարկվածների թիվը:</b> | 1   |
| <b>Ամսաթիվ:</b>                              | 29-12-2009                                    |
| <b>Նախագահող դատավոր</b>                     |   |
| Դատարանի անվանում:                           | Վճռաբեկ                                       |
| Դատավորի անուն:                              | Դավիթ Զաքարի Ավետիսյան                        |
| <b>Դատավոր</b>                               |   |

|                           |   |
|---------------------------|---|
| Դատարանի անվանում:        | Վճռաբեկ   |
| Դատավորի անուն:           | Ելիզավետա Ռեմիկի Ղանիեյան   |
| Այլ նշումներ:             |   |
| Ամսաթիվ:                  | 18-01-2010  |
| Որոշման բովանդակությունը: | <p>ԵԿԴ/ 0073/01/09</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ<br/>ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ<br/>Ո Ր Ո Շ ՈՒ Մ<br/>ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>18 հունվարի 2010 թվական ք. Երևան<br/>ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը /այսուհետ՝ Վճռաբեկ դատարան/,</p> <p>նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ<br/>մասնակցությամբ դատավորներ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ<br/>Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ<br/>Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆԻ<br/>Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ<br/>Ս.ՕՀԱՆՅԱՆԻ</p> <p>քննարկելով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման դեմ տուժող «Կասկադ Բանկ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ Արամ Կարախանյանի բերած վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,</p> <p><b>Պ Ա Ր Զ Ե Ց</b><br/>Գործի դատավարական նախապատմությունը.<br/>Քրեական գործը հարուցվել է 2009 թվականի փետրվարի 2-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հատկանիշներով:<br/>2009 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ Մարիամ Միքայելի Հարությունյանը ներգրավվել է որպես մեղադրյալ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:<br/>2009 թվականի մայիսի 4-ի որոշմամբ Մ.Հարությունյանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է, և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 1-ին մասով:<br/>Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունիսի 10-ի դատավճռով Մ.Հարությունյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ ազատազրկման 2 /երկու/ տարի ժամկետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով՝ ազատազրկման 1/մեկ/ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ պատճառված վնասի չափով: ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժները մասնակի գումարելով՝ վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ պատճառված վնասի չափով գույքի բռնագրավմամբ:<br/>ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ</p> |

ազատագրված ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան 2/երկու/ տարի ժամկետով: Միաժամանակ որոշվել է հանցագործությամբ պատճառված վնասը 2.983.000 ՀՀ դրամի չափով բռնագանձել Մ.Հարությունյանից հոգուտ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի, նկատի ունենալով, որ քաղաքացիական գործով արդեն իսկ առկա է օրինական ուժի մեջ մտած վճիռ՝ հիշյալ գումարը «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ից բռնագանձելու մասին:

«Համաներում հայտարարելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, 9-րդ կետի և 12-րդ կետի ա/ ենթակետի հիմքով, նույն դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշմամբ Մ.Հարությունյանն ազատվել է նշանակված պատիժների կրումից, իսկ մնացած մասով դատավճիռը թողնվել է անփոփոխ:

2009 թվականի հուլիսի 17-ին «Կասկադ Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը որպես քաղաքացիական հայցվորի հանցագործությամբ պատճառված վնասի մասով տրամադրվել է կատարողական թերթ:

Մ.Հարությունյանի դիմումի հիման վրա Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2009 թվականի օգոստոսի 11-ի որոշմամբ վնասի հատուցման մասով մեկնաբանել է հիշյալ դատավճռի անհստակությունը, նշելով, որ «Հանցագործությամբ 2.983.000 ՀՀ դրամի չափով պատճառված վնասը «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ից հոգուտ «Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի բռնագանձել այն պայմանով, եթե այդ գումարը բռնագանձելու պահանջի մասին արդեն իսկ առկա օրինական ուժի մեջ մտած 2008 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը դեռևս կատարված չէ»:

«Կասկադ Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի սեպտեմբերի 30-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել և բեկանել է դատավճռի անհստակությունը մակնաբանելու մասին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի օգոստոսի 11-ի որոշումը, իսկ 2009 թվականի հունիսի 10-ի դատավճիռը թողել է անփոփոխ:

Մ.Հարությունյանը 2009 թվականի հոկտեմբերի 10-ին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ դատավճռի բողոքարկման ժամկետի բացթողնման պատճառը հարգելի համարելու և դատավճիռը բողոքարկելու բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը 2009 թվականի հոկտեմբերի 16-ի որոշմամբ բավարարել է Մ.Հարությունյանի միջնորդությունը, հարգելի է համարել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունիսի 10-ի դատավճիռը պատճառված վնասի հատուցման հարցի լուծմանը վերաբերող մասով Մ.Հարությունյանի կողմից վերաքննության կարգով բողոքարկելու բաց թողնված ժամկետը և այն վերականգնել է:

Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունիսի 10-ի դատավճիռը Մ.Հարությունյանի պաշտպան Ա.Մարտիրոսյանի կողմից բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարել է, բեկանել է Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի հունիսի 10-ի դատավճիռը հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման մասով, քաղաքացիական հայցի և հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման հարցը՝ սույն քրեական գործի շրջանակներում համարել է լուծված, իսկ մնացած մասով դատավճիռը թողել է անփոփոխ:

Գործի փաստական հանգամանքները.

Մ.Հարությունյանը դատապարտվել է այն բանի համար, որ նա, հանդիսանալով 2007 թվականի մարտի 26-ին հիմնադրված և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Նորք-Մարաշ տարածքային ստորաբաժանումում գրանցված «Խ-ԴԷՄԻ» ՍՊԸ-ի տնօրեն, Ալեք Մանուկյան 7 բնակարան 66 հասցեում գործող «Ֆեյշն Թայմ» խանութում զբաղվելով կանացի ջինսե հագուստի և աքսեսուարների մանրածախ առևտրով, Երևան քաղաքի բնակիչ Արմեն Հովհաննիսյանի օժանդակությամբ ԱՄՆ-ի բանկերում գտնվող հաշվեհամարները սպասարկող բանկային կեղծ քարտերի օգտագործմամբ «Master card» միջնորդ վճարային և ՀՀ-ում գործող «Արմենիան քարդ» ՓԲ ընկերության համակարգերի միջոցով գումարներ է հափշտակել, ապա դրանք օրինականացրել է Այսպես.

Մ.Հարությունյանը 2008 թվականի հոկտեմբերի 17-ին որպես վճարում է ընդունել «MBINA AMERICA BANK» ամերիկյան բանկի կողմից թողարկված 5490990213934498 համարի բանկային քարտի կեղծ կրկնօրինակով, որի արդյունքում գողացված 2.983.000 դրամը փոխացվել է «Խ-ԴԷՄԻ» ՍՊ ընկերության «Կասկադ Բանկ» ՓԲ ընկերությունում սպասարկվող հաշվեհամարին:

Մ.Հարությունյանը, գիտակցելով, որ վերը նշված խոշոր չափերի 2.983.000 ՀՀ դրամը /«MBINA AMERICA BANK» ամերիկյան բանկի կողմից ետ պահանջված գումարը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում և նպատակ ունենալով խեղաթյուրել այդ գումարի հանցավոր ծագումը, այն կանխիկացրել է, որպես հասույթ մուտքագրել ընկերության դրամարկղ և հանցավոր ձանապարհով ստացված գումարը ցույց տալով ծախս, դրանից կատարել փոխանցումներ ընկերության հաշվեհամարից:

Բողոքի հիմնավորումները և դատարանի պատճառաբանությունները.

Բողոք բերած անձը փաստարկել է, որ բողոքը պետք է վարույթ ընդունվի, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-ի հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքը՝ Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով դատական ակտի կայացումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ և 385-րդ հոդվածների միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը խնդրել է վնասի հատուցման մասով բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշումը և օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Բողոքաբերը նշում է, որ ստորադաս դատարանը սխալ է կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 380-րդ հոդվածի պահանջները, չի կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ և 386-րդ հոդվածները, սխալ է մեկնաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի պահանջները: Մասնավորապես Մ.Հարությունյանը դատարանին չի ներկայացրել բաց թողնված բողոքարկման ժամկետը հարգելի ճանաչելու և այն վերականգնելու առումով որևէ իրական պատճառաբանություն, իսկ դատարանն իր հերթին որևէ կերպ չի հիմնավորել իր որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանը, բավարարելով դատավճիռը բողոքարկելու բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին Մ.Հարությունյանի միջնորդությունը, հիմք է ընդունել այն հանգամանքը, որ Մ.Հարությունյանին միայն դատավճի կատարման փուլում է հայտնի դարձել պատճառված վնասի գումարը կրկնակի բռնագանձելու մասին, և նա, անհստակությունը փորձելով լուծել դատական կարգով, իր կամքից

|   |   |
|---|---|
|   | <p>անկախ պատճառով բաց է թողել դատավճիռը բողոքարկելու համար սահմանված ժամկետը:</p> <p>Բողոքաբերը նշում է նաև, որ ՀՀ վերաքննիչ դատարանը բողոքի քննության արդյունքում դուրս է եկել բողոքի հիմքերից ու հիմնավորումներից:</p> <p>Վերաքննիչ դատարանի որոշման ուսումնասիրությունից երևում է, որ վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերլուծելով և գնահատելով գործով ձեռք բերված ապացույցները, ինչպես նաև գործը քննելիս և լուծելիս քրեադատավարական օրենքի նորմերի պահանջների պահպանմամբ, ներքին համոզմամբ հանգել է հետևությունների, որոնք հիմնավորված և պատճառաբանված են:</p> <p>Ինչ վերաբերում է բողոքաբերի այն փաստարկին, որ վերաքննիչ դատարանը չի հիմնավորել այն հանգամանքը, որ տուժողը զրկված չի եղել իր գույքային շահերը պաշտպանելու հնարավորությունից, ապա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ տուժողը քաղաքացիական դատավարության կարգով հայց է հարուցել դատարան՝ վնասի հատուցման պահանջով, հանգել է հիմնավոր հետևության, որ նա զրկված չի եղել իր գույքային շահերը պաշտպանելու հնարավորությունից:</p> <p>Ելնելով վերոգրյալից, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերը չի հիմնավորել, թե ինչ հիմքով սույն որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:</p> <p>Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքի առկայության վերաբերյալ հետևություն անել հնարավոր չէ:</p> <p>ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդվածի և 414.2-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, ուստի ներկայացված բողոքը ենթակա է վերադարձման:</p> <p>Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով՝ Վճռաբեկ դատարանը</p> <p><b>Ո Ր Ո Շ Ե Ց</b></p> <p>ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի նոյեմբերի 17-ի որոշման դեմ տուժողի ներկայացուցիչ Արամ Կարախանյանի բերած վճռաբեկ բողոքը վերադարձնել:</p> <p>Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:</p> <p>Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ<br/> Դատավորներ Հ.ԱՍԱՐՅԱՆ<br/> Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ<br/> Հ.ՂՈՒԿԱՍՅԱՆ<br/> Ա.ՊՈՂՈՍՅԱՆ<br/> Ս.ՕՀԱՆՅԱՆ</p> |
| <p><b>Ամսաթիվ:</b></p> <p><b>Այլ նշումներ:</b></p>                                      | <p>09-02-2010</p>   |
| <p><b>Գործի առաքման ամսաթիվ:</b></p> <p><b>Դատարան:</b></p> <p><b>Այլ նշումներ:</b></p> | <p>17-02-2010</p> <p>Կենտրոն և Նորք-Մարաշ</p> <p>1 հատոր՝ 399 թերթ:</p>   |

